ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի հունվար ամսվա ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 1611.1 մլն դրամ՝ պլանավորված 1590.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.3 տոկոսով կամ 21.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 4.6 տոկոսով կամ 70.3 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 108 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 2 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 3 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 2.7 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 96 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 51-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 20-ը՝ ձեռք բերված վառելիքի մասով ԱԱՀ–ի հաշվանցումների ճշտության, 9-ը՝ գործունեության չծավալման, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 2-ական՝ ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ճշտության ու ապրանքանյութական արժեքների մնացորդի ուսումնասիրության և 7 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ավարտվել է 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 2.6 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 44 վարչական գործով սահմանվել է 810.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9511 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6647:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 64 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 114 վարձու աշխատողի՝ 17.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 39 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ընդունվել է ԼՂՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին թվով 143 հայտարարագիր:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտային հարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին հայտարարության ձևը», լրացումներ և փոփոխություններ կատարվել՝ «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների» ձևերում և դրանց լրացման կարգերում:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում տարեսկզբից կատարված փոփոխությունները հարկ վճարողների կողմից ճիշտ ընկալելու ու գործնականում լիարժեք կիրառելու նպատակով ԼՂՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 13-ի N 18 հրամանի համաձայն հունվարի 25-ից մինչև փետրվարի 1-ը սեմինար-խորհրդակցություններ են անցկացվել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, Քաշաթաղի, Շահումյանի շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում գործող հարկ վճարողների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում և մի շարք այլ ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները:

Էլեկտրոնային եղանակով հարկային հաշվետվությունների հանձնման հետ կապված խնդիրներ ունեցող հարկ վճարողներին աջակցելու նպատակով ցուցաբերվել է օժանդակություն:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 210, ելքագրվել՝ 64 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 2 գրություն, որից 1-ը՝ «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: